Սիփան Շիրազ

Աչք Արեգական

Վերերկրային տրտմություն է թափվում կապույտ հողին,
Հողը՝ կապույտ այս երկնքից մի քիչ էլ վեր -
ՈՒ մենք պիտի ապրենք էնտեղ - արարողի
Համար տանենք հրաշք - վառվող արեգակներ:

Տաք կրծքի տակ ապրող մի սիրտ, մի հուշ, մի սեր,
Վերերկրային մի տրտմություն և լույս հոգի -
ԵՎ մոմերի հոգուց ելած արեգակներ,
Արեգակներ ՄԱՅՐ - ԱՉՔԻ ՄԵՋ ԱՐԵԳԱԿԻ:

Սեր ջան, հոգի և ԱՍՏՎԱԾ ԻՄ, և լույս իմ օր,
Վերերկրային նախանշան՝ ՅՈԹՆ ԻՄ ԽՈՑԻ -
Արեգակներ - ՏԵՍԱՆՈՂ ԱՉՔ ԱՍՏԾՈ ԵՎ ՀՈՐ -
ԱՐԵԳԱԿԱՆ ԱՆԵՐԵՐ ԻՄ ԵԿԵՂԵՑԻ:

Վերերկրային տրտմություն իմ - ԼՈՒՅՍ ՀԱԳԱԾ ԼՈՒՅՍ,
ՀԱՅՐ - ՍՈՒՐԲ ՀՈԳԻ, ԵՂԲԱՅՐ - ԼՈՒՍՈ ԱՉՔ ԽՈՐՀՐԴԻ.
Արեգակներ - հրեշտակաց սահմանից դուրս,
Իսկ՝ ԱՆՍԱՀՄԱՆ՝ ԴՈՒ ԵՍ, ՀՐԱՇՔ - ՆԱԽԱՈՐԴԻ:

Օրն այս կանցնի և խավարում խարխափողի
Հողը՝ կապույտ այս երկնքից մի քիչ էլ վեր՝
ԿԱՊՐԻ՝ ՈՐՊԵՍ ԱՐԹՈՒՆ ԱՉՔԸ ԱՐԱՐՈՂԻ
ԵՎ ԳԹՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍ ԵՎ ՀՈԳԻ, ԵՎ սեր, ԵՎ ՍԵՐ: